որոնք նրա զինուորների համար պաշար էին կրում եւ հայոց աստուծոյ հրամանով քար դարձան: Եւ հայը միշտ պարծենալով է յիշում իր նախահոր – Հայկ դիւցազնի յաղթութիւնը, եւ հպարտանում է, որ ինքը մի այնպիսի մեծ մարդու սերունդ է, որ շառաւիղում էր աստուածների արիւնից:

Այն երկրում դեռ չէին ցամաքել չորս գետերը, որոնք բխում էին աստուծոյ դրախտից, եւ Բինգեօլի ծաղկաւէտ դաշտին նայելով, հայը ասում էր իր որդուն՝ «տես, տես, այստեղ էր մեր նախահոր եւ նախամօր բնագաւառը»: Նա ցոյց էր տալիս «Կայէնի ծառերը», որոնց հովանու տակ հանգստանում էր առաջին երկրագործը: Նա ցոյց էր տալիս «Ղամեքայ բերդը» — այն քաջ որսորդի ամրոցը, որը սպանեց Ադամի անդրանիկ, բայց դատապարտեալ որդուն: Նա ցոյց էր տալիս դաշտերը, ուր առաջին խաշնարած Աբէլը արածացնում էր իր ոչխարները: Իսկ Մարանդի մէջ գտնում էր նա Նոյի կնոջ՝ Նոյեմզարի գերեզմանը:

Հայի որդին տեսնում էր, որ առաջին հօր եւ առաջին մօր ժամանակից, ինքն անբաժան է մնացել այն երկրից, ուր բնակւում էր մարդկութեան նախաստեղծ զոյգը:

Ցրիեղեղը մինչեւ անգամ իր աշխարհաւեր սասանմունքով չկարողացաւ դուրս մղել հային հայրենի երկրից: Գրգուռ սարին նայելով, նա միշտ յիշում էր այն աւանդութիւնը, թէ Նոյի տապանը այս սարին քսուելով, անցաւ դէպի Սիփան լեռը, խնդրեց նրանից ընդունել իրան իր գագաթի վրայ: Սիփանը համեստութեամբ պատասխանեց, թէ ինքը հայոց լեռների ամենակրտսերն է, եւ ցոյց տուաւ դէպի իր անդրանիկ եղբայրը — հսկայ Արարատը, ասելով՝ «Գնա՛յ ի Մասիս, որ բարձր է քան զիս»:

Ահա՝ այսպիսի պատմական յիշատակներով էր կապուած հայի սրտի հետ հայրենիքը, ուր սկսեալ ամենախորին հեթանոսական դարերից, ժողովրդի մէջ կենդանի մնացած աւանդութիւնները յիշեցնում էին նրան իր հին առասպելա-վիպական անցեալը:

Այս յիշատակները պահպանել էին հսկայական լեռները, որոնք ստեղծուել էին ժամանակի հետ եւ ապրում էին, քանի որ նա կար: Այս յիշատակները պահպանել էին ահագին գետերը, ծովակները եւ լճերը, որոնց կեանքը տեւում է անթուելի դարերով: Այս յիշատակները պահպանել էր վերջապէս ժողովրդի ոգին, որ երբեք չէ մեռնում:

Հայը չէր ուզում բաժանուել հայրենիքից: Հայրենիքը նրա սրբութիւնն էր: Այնտեղ ամէն մի քար, ամէն մի աւերակ յիշեցնում էին նրան իր վաղեմի մեծութիւնը: Դեռ բոլորովին չէին անհետացել բերդերի, ամրոցների փլա-